ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է ցրվել Աթենական ծովային միությունը.**

1) Ք.ա.401թ.
2) Ք.ա. 404թ.
3) Ք.ա. 406թ.
4) Ք.ա. 405թ.

2 **Ե՞րբ է տապալվել արքայական իշխանությունը Հռոմում.**

1) Ք.ա. 510թ.
2) Ք.ա. 515թ.
3) Ք.ա. 525թ.
4) Ք.ա. 535թ.

3 **Ե՞րբ է ձևավորվել Հռոմի պապի աշխարհիկ պետությունը Միջին Իտալիայում.**

1) 806թ.
2) 786թ.
3) 756թ.
4) 776թ.

4 **Ե՞րբ է Ֆիլիպ IV Գեղեցիկն առաջին անգամ հրավիրել Գլխավոր շտատները.**

1) 1308 թ.
2) 1302 թ.
3) 1312 թ.
4) 1305 թ.

5 **Ե՞րբ է ԱՄՆ-ը հռչակվել համադաշնություն.**

1) 1776 թ.
2) 1791 թ.
3) 1787 թ.
4) 1781 թ.

6 **Ե՞րբ են Գերմանիան ու Իտալիան նվաճել Հարավսլավիան և Հունաստանը.**

1) 1939թ. դեկտեմբերին
2) 1940թ. նոյեմբերին
3) 1941թ. ապրիլին
4) 1942թ. մայիսին

7 **Ե՞րբ է ստեղծվել Սիրիա պետությունը.**

1) 1946 թ.
2) 1933 թ.
3) 1924 թ.
4) 1918 թ.

80 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը	#	Վայրը
1.	«Մարտական միության» ստեղծումը	1.	1933թ.	1.	Ու. Չերչիլ	1.	Իտալիա
2.	«Սառը պատերազմի» սկիզբը	2.	1945թ.	2.	Բ. Մուսսոլինի	2.	Պոտսդամ
3.	«Մեծ Եռյակի» հանդիպումը	3.	1946թ.	3.	Ֆ. Ռուզվելտ	3.	ԱՄՆ
4.	«Նոր կուրսի» քաղաքականության սկիզբը	4.	1919թ.	4.	Հ. Թրուման	4.	Ֆուլտոն

1)

1	4	2	1
2	3	1	4
3	2	4	2
4	1	3	3

2)

1	4	2	3
2	1	3	2
3	3	1	4
4	2	4	1

3)

1	2	2	1
2	3	4	3
3	1	3	4
4	4	1	2

4)

1	4	2	1
2	3	3	4
3	2	4	2
4	1	1	3

78 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Վայրը	#	Գործիչը
1.	Լյութերին գաղափարներից հրաժարեցնելու համար հրավիրված Ռայխստագը	1.	1389թ.	1.	Նանտ	1.	Ստեֆան Դուշան
2.	հուգենոտներին դավանանքի ազատություն շնորհող էդիկտը	2.	1055թ.	2.	Բաղդադ	2.	Կարլոս V
3.	ճակատամարտը սերբական և օսմանյան բանակների միջև	3.	1521թ.	3.	Վորմս	3.	Հենրիխ IV Բուրբոն
4.	թյուրք-սելջուկների տերության առաջացումը	4.	1598թ.	4.	Կոսովո	4.	Տուղրիլ բեկ

1)

1	4	2	3
2	3	4	4
3	1	3	2
4	2	1	1

2)

1	2	4	1
2	4	3	2
3	1	2	4
4	3	1	3

3)

1	3	3	2
2	4	1	3
3	1	4	1
4	2	2	4

4)

1	1	4	2
2	3	1	3
3	4	2	1
4	2	3	4

79 **Կատարել համապատասխանեցում.**

1. Պետրոս I–ի կողմից կայսրական տիտղոսի ընդունումը
2. Անգլիական զորքերի դուրս բերումը Եգիպտոսից
3. Օսմանյան սահմանադրության ընդունումը
4. Աղա Մոհամմադ խանի զորքերի ներխուժումն Անդրկովկաս
5. ԱՄՆ-ի Ժողովրդավարական կուսակցության հիմնումը

ա. 1828թ.
բ. 1876թ.
գ. 1803թ
դ. 1721թ.
ե. 1797թ.
զ. 1854թ.

1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-ա, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե, 5-ա
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-զ, 5-ե

8 **Պարսից ո՞ր արքան է սկյութների դեմ կազմակերպել անհաջող արշավանք.**

1) Դարեհ III-ը
2) Արտաքսերքսես II-ը
3) Դարեհ I-ը
4) Արտաքսերքսես III-ը

9 **Ինչպե՞ս էր կոչվում Հին Աթենքի ավագների խորհուրդը.**

1) բուլե
2) արեոպագոս
3) ապելլա
4) էկլեսիա

10 **Որտե՞ղ է 778թ. ջախջախվել ֆրանկների վերջապահ գունդը Ռոլանդի գլխավորությամբ.**

1) Ռոնսևալի կիրճում
2) Կատալաունյան դաշտում
3) Պուատիեի մոտ
4) Հռոմի մատույցներում

11 **Բալկանյան ո՞ր երկրների միավորմամբ է ձևավորվել Ռումինիա պետությունը.**

1) Սերբիայի և Չեռնոգորիայի
2) Սերբիայի և Ալբանիայի
3) Հունաստանի և Մակեդոնիայի
4) Վալախիայի և Մոլդովայի

12 **Ինչպե՞ս է կոչվում ամերիկյան սահմանադրության առաջին 10 փոփոխություններն ընդգրկող փաստաթուղթը.**

1) «Համադաշնության հոդվածներ»
2) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»
3) «Իրավունքների օրենք»
4) «Իրավունքների մասին օրենքներ»

13 **Ո՞ր պետության նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ռեզա խանի գլխավորությամբ ռազմական հեղաշրջումն Իրանում.**

1) ԽՍՀՄ-ի
2) Ֆրանսիայի
3) Մեծ Բրիտանիայի
4) ԱՄՆ-ի

14 **Ինչպե՞ս էր կոչվում Ֆ. Ֆուկայամայի աշխատությունը.**

1) «Քաղաքակրթությունների բախումը»
2) «Պատմության ավարտը»
3) «Քաղաքակրթությունների երկխոսությունը»
4) «Նոր մեկնարկ»

15 **Ի՞նչ է բուլեն.**

1) Սոլոնի կողմից Աթենքում ստեղծված ատենակալների դատարանը
2) Ժողովրդական ժողով մտնող օրենքների նախագծերը քննարկող մարմին Աթենքում
3) ավագների խորհուրդը Հին Ատտիկայում
4) Կլիսթենեսի կողմից ստեղծված 10 ստրատեգոսների խորհուրդը

16 **Ո՞րն է «քարոկկո» տերմինի բացատրությունը.**

1) բնական, բնություն
2) խորհրդապաշտություն
3) արտասովոր, տարօրինակ
4) տպավորություն

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պերիկլեսի պաշտոնավարման սկիզբը
բ. Աթենական պետության ժողովրդավարացման սկիզբը
գ. Եգիպտոսի նվաճումն Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
դ. Աթենական նավատորմի արշավանքը Սիցիլիա

1) գ,ա,բ,դ
2) դ,գ,բ,ա
3) բ,ա,դ,գ
4) ա,բ,դ,գ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բրուսան օսմանյան պետության մայրաքաղաք հռչակումը
բ. կայսր Կարլոս V-ի կողմից Ռայխստագի հրավիրումը Վորմսում
գ. պորտուգալացի ծովագնացների կողմից Բարեհուսո հրվանդանին հասնելը
դ. Սեֆյանների պետության ստեղծումը

1) բ,ա,դ,գ
2) ա,դ,բ,գ
3) դ,գ,բ,ա
4) ա,գ,դ,բ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նապոլեոնի բանակի ներխուժումը Եգիպտոս
բ. Միջազգային կարմիր խաչի ընկերության ստեղծումը
գ. Իտալական թագավորության հռչակումը
դ. միապետության վերացումը Ֆրանսիայում

1) բ,ա,դ,գ
2) գ,բ,ա,դ
3) ա,դ,գ,բ
4) դ,ա,գ,բ

77 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը
1.	Սամարիայի գրավումը	1.	Ք.ա.449թ.	1.	Թիգլաթպալասար III
2.	Բաբելոնի գրավումը ասորեստանցիների կողմից	2.	Ք.ա. 587թ.	2.	Կալիաս
3.	Հույն-պարսկական հաշտության պայմանագրի կնքումը	3.	Ք.ա.720թ.	3.	Նաբուգոդոնոսոր II
4.	Երուսաղեմի երկրորդ գրավումը բաբելոնյան զորքերի կողմից	4.	Ք.ա.729թ.	4.	Սարգոն II
		5.	Ք.ա. 626թ.		Նաբոպալասար

1)

1	3	4
2	4	1
3	1	2
4	2	3

2)

1	2	3
2	5	2
3	4	1
4	3	4

3)

1	3	4
2	1	2
3	2	1
4	4	5

4)

1	4	3
2	1	4
3	5	5
4	2	1

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կինոսկեֆալեի ճակատամարտը
բ. Իսոսի ճակատամարտը
դ. Իսթմոսի ճակատամարտը Սպարտայի և Աքայան միության զորքերի միջև
գ. Սպարտայի արքա Արքիդամոսի ներխուժումը Ատտիկա
ե. Աթենքի «Երկար պարիսպների» քանդումը
զ. Պարսկական նավատորմի ջախջախումը Սալամին կղզու մոտ
է. Պիլոս քաղաքի գրավումն աթենացի զորավար Դեմոսթենեսի կողմից
ը. Կորնթոսի համահունական վեհաժողովը
թ. Արբելայի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև
ժ. Քսերքսես I Աքեմենյանի սպանությունը

1) գ,ե,զ,ա,ժ,բ,է,թ,դ,ը
2) զ,ժ,գ,է,ե,ը,բ,թ,ա,դ
3) թ,ա,բ,դ,ե,գ,է,ժ,ը,զ
4) դ,գ,ա,ե,բ,ժ,զ,է,թ,ը

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փարիզի խորհրդաժողովի աշխատանքների սկիզբը
բ. Բ. Մուսսոլինիի ֆաշիստական վարչակարգի հաստատումը Իտալիայում
գ. Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» կենսագործման սկիզբը
դ. ԽՍՀՄ-ի անդամագրվելը Ազգերի Լիգային
ե. Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ-ում
զ. Երկրորդ աշխարհամարտի չորրորդ փուլը
է. Շառլ դը Գոլը Ֆրանսիայի նախագահ
ը. Նյուրնբերգյան դատավարությունը
թ. Սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը
ժ. Մարշալի պլանի ընդունումը

1) գ,ա,բ,դ,զ,ե,թ,ժ,ը,է
2) ա,բ,դ,զ,է,թ,ը,գ,ժ,ե
3) բ,ա,դ,գ,ը,ժ,թ,ե,է,զ
4) ա,բ,գ,դ,զ,ը,ժ,է,ե,թ

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իսրայելի ստեղծումը
բ. ԱՄՆ-ի ռազմական միջամտության սկիզբը Իրաքում
գ. Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ
դ. «Ալ Քայիդա» ահաբեկչական կազմակերպության կողմից իրականացված գործողություններն ԱՄՆ-ում

1) բ,գ,դ,ա
2) ա,դ,գ,բ
3) ա,գ,դ,բ
4) գ,դ,ա,բ

21 **Ե՞րբ է կոնսուլ ընտրվել Հուլիոս Կեսարը.**

1) Ք.ա. 49թ.
2) Ք.ա. 44թ.
3) Ք.ա. 59թ.
4) Ք.ա.54թ

22 **Ե՞րբ է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու պառակտումը.**

1) 1054թ.
2) 1045թ.
3) 1052թ.
4) 1055թ.

23 **Ե՞րբ է Հենրիխ IV-ը հրապարակել Նանտի էդիկտը.**

1) 1572թ.
2) 1588թ.
3) 1594թ.
4) 1598թ.

24 **Ե՞րբ է Մուհամեդ Ալին դարձել Եգիպտոսի կառավարիչ.**

1) 1831թ.
2) 1813թ.
3) 1805թ.
4) 1815թ.

25 **Ե՞րբ է Եվրոպական համագործակցությունը վերանվանվել Եվրոպական Միության.**

1) 1993թ.
2) 2002թ.
3) 1995թ.
4) 2006թ.

26 **Ո՞ր աստվածն էր գլխավորում էտրուսկների դիցարանը.**

1) Յուպիտերը
2) Վերտումնումը
3) Նեպտունը
4) Զևսը

27 **Ո՞ր թագավորն է 1215թ. հրապարակել «Ազատությունների մեծ հրովարտակը».**

1) Ֆիլիպ Գեղեցիկը
2) Ռիչարդ Առյուծասիրտը
3) Հովհան Անհողինը
4) Ֆրիդրիխ Շիկամորուսը

28 **Ո՞վ էր Պետրոս Աբելյարը.**

1) միջնադարյան նշանավոր գրող
2) միջնադարյան նշանավոր նկարիչ
3) միջնադարյան նշանավոր ճանապարհորդ
4) միջնադարյան նշանավոր աքոլաստ

29 **Ո՞վ է 1916թ. հռչակվել արաբ ժողովրդի թագավոր.**

1) Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալին
2) Մեքքայի կառավարիչ Ալին
3) Հորդանանի կառավարիչ Մուհամեդը
4) Հիջազի կառավարիչ Հուսեյնը

30 **Ո՞ր տարածքները դարձան գերմանական պրոտեկտորատ ըստ «Մյունխենյան գործարքի».**

1) Լեհաստանը և Հունգարիան
2) Չեխիան և Մորավիան
3) Չեխիան և Լեհաստանը
4) Լիտվան և Լատվիան

31 **Ո՞րն է Ք.ա. III հազարամյակի կեսերից սեմական ցեղերի ներթափանցման գլխավոր հետևանքը.**

1) Ավերվեցին և ամայացան շումերական քաղաքները, քայքայվեց տնտեսությունը:
2) Որոշ շրջաններում իշխանությունն անցավ սեմական առաջնորդների ձեռքը:
3) Սկսվեց Միջագետքի բնակեցումն ու յուրացումը:
4) Ստեղծվեց Շումերի միասնական թագավորությունը:

32 **Ո՞րն էր 843թ. Վերդենի դաշնագրի գլխավոր հետևանքը.**

1) Չեավորվեց Գերմանական(Տևտոնական) թագավորությունը:
2) Արաբները վերջնականապես հեռացան Հարավային Գալլիայից:
3) Ֆրանկական տերությունը բաժանվեց երեք մասի:
4) Ֆրանկական տերությանը միացվեցին Հյուսիսային Իտալիան և Բուրգունդիան:

73 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Եվրոպայում բացարձակ միապետության առաջացման հիմնական պատճառ.**

ա. Ազնվականությունը որպես ռազմաքաղաքական խավ կորցրեց իր նախկին դերը՝ կախման մեջ ընկնելով միապետից:
բ. Առաջացան և որպես ինքնավար միավորներ հանդես եկան միջնադարյան քաղաքները:
գ. Իսլամական աշխարհից Եվրոպային մշտապես վտանգ էր սպառնում:
դ. Եկեղեցու ենթարկումը պետությանը, Ռեֆորմացիան և աշխարհիկ մտավորական խավի առաջացումը միապետից կախման մեջ դրին հոգևորականությանը:
ե. Միապետի շուրջ համախմբվեցին առևտրականներն ու արդյունաբերողները, որոնք ամենից շատ էին զգում պետության հովանավորության կարիքը:
զ. Ստեղծվել էր անհրաժեշտություն՝ կանխարգելու պետության կառավարման կենտրոնացումը մի խումբ մարդկանց ձեռքում:

1) բ,գ,զ
2) ա,գ,դ
3) ա,դ,ե
4) գ,ե,զ

74 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառ.**

ա. Գերմանիայի համաշխարհային տիրապետության հասնելու ձգտումը
բ. «Մյունխենյան գործարքը»
գ. աշխարհաքաղաքական երեք հիմնական կենտրոնների ձևավորումը
դ. տնտեսական հակամարտությունների սրումը տերությունների միջև
ե. ԽՍՀՄ-ի և միջազգային կոմունիստական շարժման դեմ պայքարը
զ. ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև պայմանագրի ստորագրումը
է. խորհրդա-գերմանական համաձայնագրով ազդեցության գոտիների բաժանումը Արևելյան Եվրոպայում

1) գ,ե,զ,է
2) ա,գ,դ,ե
3) բ,գ,ե,զ
4) ա,բ,գ,է

71 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. հուգենոտներ
2. լյութերական եկեղեցի
3. Ազգային կոնվենտ
4. օպորտունիստներ
5. Կառավարման միջոց
6. Գերմանական միություն

ա. ֆրանսիական Սահմանադիր ժողով
բ. Վիեննայի վեհաժողովի որոշմամբ ստեղծված պետական կազմավորում
գ. բողոքական եկեղեցու անվանումը Գերմանիայում
դ. կալվինական եկեղեցու հետևորդներ Ֆրանսիայում
ե. չափավոր հանրապետականներ
զ. անգլիական սահմանադրությունը Օ. Կրոմվելի պրոտեկտորատի ժամանակ
է. բողոքական եկեղեցու անվանումն Անգլիայում

1) 1-ե, 2-է, 3-բ, 4-դ, 5-ա, 6-գ
2) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-է, 6-դ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-է, 5-բ, 6-զ
4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-զ, 6-բ

72 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. «Հակակոմինտերնյան պակտ»
2. «Բեռլին-Հռոմ առանցք»
3. Կոմունիստական Ինտերնացիոնալ
4. Հակահիտլերյան կոալիցիա
5. «Հռենոսի ապառազմականացված գոտի»

ա. տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն
բ. Գերմանիայի և Ճապոնիայի միջև 1936թ. նոյեմբերի 25-ին Բեռլինում կնքված պայմանագիր
գ. Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պայքարող պետությունների ու ժողովուրդների միություն
դ. Վերսալյան պայմանագրով որոշված գոտի Գերմանիայի տարածքում
ե. Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային-ազատագրական, հակաֆաշիստական շարժում
զ. 1936թ. ձևավորված գերմանա-իտալական խմբավորում

1) 1-բ, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ
2) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-գ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ
4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե, 5-դ

33 **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հուլիոս Կեսար
բ. Պյուռհոս
գ. Կոռնելիոս Սուլլա
դ. Պերսևս

1) բ,դ,գ,ա
2) դ,բ,ա,գ
3) գ,ա,բ,դ
4) ա,դ,գ,բ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սերբիայի հռչակումը թագավորություն
բ. հույների ապստամբության սկիզբը օսմանյան տիրապետության դեմ
գ. Հանրապետական կուսակցության ստեղծումն ԱՄՆ-ում
դ. Սիրիայի գրավումը Մուհամեդ Ալիի կողմից

1) ա,գ,բ,դ
2) գ,ա,դ,բ
3) բ,դ,գ,ա
4) դ,բ,գա

35 **Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը. «Նպատակը արդարացնում է միջոցները»:**

1) Էրազմ Ռոտերդամցին
2) Նիկոլո Մաքիավելին
3) Ֆրանսուա Ռաբլեն
4) Թոմաս Մորը

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մի հարցրեք, թե ինչ կարող է անել ձեզ համար ձեր հայրենիքը, այլ հարցրեք, թե ինչ կարող եք անել դուք ձեր հայրենիքի համար»:**

1) Ջ. Քենեդին
2) Վ. Պուտինը
3) Ու. Չերչիլը
4) Ռ. Քենեդին

37 **Կատարել համապատասխանեցում.**

1. Օսիրիս
2. Աիրիման
3. Ամոն-Ռա
4. Դի
5. Մարդուկ

ա. անձրևի, կայծակի և քամու աստված
բ. արևի աստված
գ. բարի և ստեղծարար ոգի-աստծու հակառակորդ
դ. երկինքը մարմնավորող աստված
ե. մեռնող և հարություն առնող աստված
զ. աշխարհաստեղծ աստված

1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-զ, 5-բ
2) 1-գ, 2-զ, 3-ա, 4-դ, 5-ե
3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-զ, 5-դ
4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա, 5-զ

38 **Մշակույթի գործիչներին համապատասխանեցնել այն երկրների հետ, որտեղ նրանք ստեղծագործել են.**

1. Օ. Լունդստրեմ
2. Ի. Մոնտան
3. Դ. Սիկեյրոս
4. Լ. Վիսկոնտի
5. Հ. Հաուպտման

ա. Գերմանիա
բ. Իտալիա
գ. Մեքսիկա
դ. Ֆրանսիա
ե. ԽՍՀՄ
զ. Նորվեգիա

1) 1-ե, 2-բ, 3-զ, 4-ա, 5-դ
2) 1-ա, 2-դ, 3-զ, 4-ե, 5-գ
3) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե
4) 1-ե, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ա

39 **Ո՞վ էր Նոր կատակերգության հիմնադիրը.**

1) Մենանդրոսը
2) Արիստոֆանեսը
3) Սոֆոկլեսը
4) Տերենտիոսը

40 **Ըստ իմպրեսիոնիզմի հետևորդների արվեստագետը պետք է.**

1) պատճենահանի բնությունը
2) գույների անսովոր համադրությամբ ցույց տա իր ակնթարթային տպավորության գեղեցկությունը
3) սիմվոլի միջոցով նորովի վեր հանի մարդկային հոգեբանության դրսևորումները և զգացմունքների աշխարհը
4) «մաքուր արվեստի» միջոցով փառաբանի գեղեցկությունը հանուն գեղեցկության

41 **Ո՞րն էր Ռիչարդ I Առյուծասրտի և Սալադինի միջև կնքված հաշտության պայմանագրի հիմնական պատճառը.**

1) Խաչակիրները գրավել էին Երուսաղեմը:
2) Խիստ սրվել էին անգլո-ֆրանսիական հարաբերությունները:
3) Հռոմի պապը կոչ էր արել դադարեցնել խաչակրաց արշավանքները:
4) Փոքորիկը կործանել էր Եվրոպայից Ռիչարդ I-ին օգնության շտապող նավատորմը:

42 **Ո՞րն էր «Հակակոմինտերնյան պակտի» հիմնական նպատակը.**

1) Հակահիտլերյան կոալիցիայի փլուզումը:
2) Ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականությունը:
3) Համատեղ պայքարը Կոմունիստական ինտերնացիոնալի դեմ:
4) Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը:

69 **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք տեղ են գտել Թ. Բլեյրի «Երրորդ ուղի. նոր քաղաքականություն նոր դարաշրջանի համար» գրքում.**

ա. թետչերիզմի ծայրահեղական կողմերի մերժում
բ. միջազգային հարաբերություններում հավասարակշռության ստեղծում
գ. արտադրության և իրացման միասնական կառավարման համակարգի ստեղծում
դ. սոցիալիզմի ոգով տնտեսությունը պետականացնելու լեյբորիստների նախկին մոտեցման մերժում
ե. նոր՝ խառը տնտեսության ստեղծում
զ. տնտեսության «սոցիալականացում»
է. օտարերկրյա կապիտալի գործունեության սահմանափակում

1) գ,դ,զ,
2) բ,գ,ե
3) ա,դ,է
4) ա,դ,ե

70 **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. արքոնտ
2. գերուսիա
3. ցենզոր
4. մագիստրատուրա
5. օպտիմատ
6. դոմինատ

ա. 5 տարին մեկ ընտրվող և բնակչության հաշվառումն իրականացնող պաշտոնյա Հին Հռոմում
բ. Ծերակույտի վերնախավի ներկայացուցիչ Հին Հռոմում
գ. կայսր Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման ձև
դ. նախապես՝ ցմահ կառավարող գլխավոր գործադիր պաշտոնյա Հին Աթենքում
ե. գործադիր իշխանության ճյուղավորված համակարգ Հին Հռոմում
զ. 30 հոգուց կազմված ավագների խորհուրդ Հին Սպարտայում
է. գերագույն մագիստրատի տեղակալ Հին Հռոմում

1) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
2) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-բ, 6-գ
3) 1-դ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-գ, 6-է
4) 1-է, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ, 6-ա

67 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք վերաբերում են Եգիպտոսի Միջին թագավորության դարաշրջանին.**

ա. Միասնական պետությունն անկում ապրեց և տրոհվեց առանձին նոմերի:
բ. Վերականգնվեց երկրի տնտեսությունը, կառուցվեցին նոր քաղաքներ և ջրանցքներ:
գ. Վերակազմավորվեց բանակը, ստեղծվեցին մարտակառքերի ջոկատներ, աճեց վարձկանների թիվը:
դ. Եգիպտացիները յուրացրեցին բրոնզի ձուլման տեխնիկան, աշխուժացան առևտրական կապերը Փոքր Ասիայի, Սիրիայի և Միջագետքի հետ:
ե. Եգիպտական տերության հյուսիսային սահմանները հասան մինչև Կարքեմիշ և Միտաննի:
զ. Եգիպտոսին ենթարկվեցին Նուբիան, Պաղեստինը և փյունիկյան որոշ քաղաքներ:
է. Իրականացվեցին կրոնական բարեփոխումներ, խիստ կրճատվեցին քրմության իրավունքները:

1) ա,գ,է
2) գ,ե,զ
3) բ,դ,զ
4) ա,դ,ե

68 **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. XVIIդ. հոլանդացի մտածող Գրոտիուսը զարգացրել է այն տեսությունը, ըստ որի դարերով ձեռք բերված ազգային արժեքները պետք է թողնել անփոփոխ:
բ. XVIII դարը «Լուսավորության դար» է անվանվել անգլիացի մտածող Ջոն Լոկի կողմից:
գ. Իտալիայում լուսավորական շարժման նշանավոր գործիչներն էին Վեզալիուսը և Ջորդանո Բրունոն:
դ. Անգլիայում XIXդ. 50-70-ական թթ. թորի կուսակցությունը վերակազմավորվեց և ստացավ պահպանողական անվանումը:
ե. Անրի Սեն-Սիմոնը ֆրանսիական պահպանողականության ականավոր գործիչներից է:
զ. Առաջին անգամ կոմունիզմ հասկացությունն օգտագործվել է Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին:
է. «Ազատական» հասկացությունը, որպես քաղաքական խմբավորման անվանում, առաջին անգամ կիրառվել է անգլիական խորհրդարանում:

1) բ,դ,զ
2) ա,գ,է
3) բ,դ,ե
4) գ,զ,է

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հռոմի պաշարումը գալլերի կողմից
բ. Թրակիայի ապստամբության ճնշումը հռոմեացիների կողմից
գ. արքայական իշխանության տապալումը Հռոմում
դ. պայմանագրի կնքումը Հռոմի և Անտիոքոս III Սելևկյանի միջև

1. ա,գ,բ,դ
2. դ,բ,գ,ա
3. բ,գ,ա,դ
4. գ,ա,դ,բ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. ալբիգոյների դեմ Ինոկենտիոս III պապի կազմակերպած խաչակրաց արշավանքը
բ. Վորմսի համաձայնագրի ստորագրումը
գ. առաջին խաչակրաց արշավանքի սկիզբը
դ. Դանիայի թագավոր Բեռվուլֆի մասին ասքի գրառումը
ե. հունգարների ջախջախումը Օտտոն I-ի կողմից

1) ե,դ,գ,բ,ա
2) բ,ե,դ,գ,ա
3) գ,ա,դ,ե,բ
4) դ,ե,ա,բ,գ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ֆոլկլենդյան պատերազմը
բ. Չորրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
գ. Թ. Բլեյրի կառավարումը
դ. ՄԱԿ-ի որոշումը Պաղեստինի տարածքում արաբական և հրեական պետություններ ստեղծելու մասին

1) գ,ա,բ,դ
2) բ,դ,գ,ա
3) դ,բ,ա,գ
4) բ,դ,ագ

46 **Մշակույթի գործիչներին համապատասխանեցնել արվեստի ուղղությունների հետ.**

1. Լիսիաս
2. Հորացիոս
3. Լիսիպոս
4. Արիստոֆանես
5. Պլատոն

ա. քանդակագործություն
բ. կատակերգություն
գ. ճարտասանություն
դ. փիլիսոփայական երկխոսություն
ե. պոեզիա
զ. Նոր կատակերգություն

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե, 5-ա
2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ, 5-գ
3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-գ

47 **Կատարել համապատասխանեցում.**

1. խաչակրաց երրորդ արշավանքի ավարտը
2. Արևելքում խաչակիրների վերջին հենակետի անկումը
3. Եդեսիայի գրավումը Մոսուլի կառավարիչ Զանգիի կողմից
4. Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից

ա. 1144թ.
բ. 1204թ.
գ. 1192թ.
դ. 1268թ.
ե. 1291թ.

1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. անգլիացիների վերահսկողության հաստատումը Եգիպտոսում
2. Երրորդ հանրապետության սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում
3. ընտրական երկրորդ բարեփոխման ընդունումը Մեծ Բրիտանիայում
4. միջազգային օլիմպիական կոմիտեի ստեղծումը
5. «Ազգերի իրավահավասարության» մասին օրենքի ընդունումը Հունգարիայի խորհրդարանի կողմից

ա. 1867թ.
բ. 1868թ.
գ. 1875թ.
դ. 1841թ.
ե. 1894թ.
զ. 1863թ.

1) 1-ա, 2-զ, 3-բ, 4-դ, 5-գ
2) 1-դ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-զ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ
4) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ

49 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Ճապոնիայի միանալը գերմանա-իտալական դաշինքին
2. Աղիս Աբեբայի գրավումը իտալական բանակի կողմից
3. Դանիայի և Նորվեգիայի գրավումը Գերմանիայի կողմից
4. Ճապոնիայի ագրեսիան Մոնղոլիայի դեմ
5. ԳԺՀ-ի միավորումը ԳԴՀ-ի հետ

ա. 1936թ.
բ. 1990թ.
գ. 1935թ.
դ. 1939թ.
ե. 1944թ.
զ. 1940թ.

1) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
2) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ
3) 1-ա, 2-գ, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-գ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ

65 **Կատարել համապատասխանեցում.**

1. Աթենքի գրավումը Քսերքսեսի I-ի կողմից
2. Աթենական ծովային միության ցրումը
3. Մակեդոնիայի արքա Փիլիպոս II-ի գահակալման սկիզբը
4. Պլատեայի ճակատամարտը հունական և պարսկական բանակների միջև
5. սպարտացիների արշավանքը Հյուսիսային Հունաստանի պոլիսների դեմ

ա. Ք.ա. 424թ.
բ. Ք.ա. 479թ.
գ. Ք.ա. 359թ.
դ. Ք.ա. 480թ.
ե. Ք.ա. 404թ.
զ. Ք.ա. 421թ.

1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ, 5-ա
2) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ, 5-զ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-դ
4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-բ, 5-գ

66 **Քաղաքական և մշակույթի գործիչներին համապատասխանեցնել երկրների հետ.**

1. Ռիշելյո
2. Ալբրեխտ Դյուրեր
3. Ժան Կալվին
4. Կարլոս Խիզախ
5. Թոմաս Մոր
6. Ֆիլիպ II
7. Վասկո դա Գամա
8. Կոպեռնիկոս
9. Վիլհելմ I Օրանցի
10. Գալիլեյ

ա. Շվեյցարիա
բ. Իսպանիա
գ. Իտալիա
դ. Բուրգունդիա
ե. Ֆրանսիա
զ. Անգլիա
է. Լեհաստան
ը. Հոլանդիա
թ. Պորտուգալիա
ժ. Գերմանիա

1) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-ժ, 6-դ, 7-զ, 8-է, 9-թ, 10-ը
2) 1-ը, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ, 6-գ, 7-է, 8-զ, 9-ժ, 10-թ
3) 1-ե, 2-ժ, 3-ա, 4-թ, 5-գ, 6-դ, 7-բ, 8-ը, 9-է, 10-զ
4) 1-ե, 2-ժ, 3-ա, 4-դ, 5-զ, 6-բ, 7-թ, 8-է, 9-ը, 10-գ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ռուսիայի նվաճումը մոնղոլների կողմից
բ. Ոսկե Հորդայի տիրապետության տապալումը Ռուսական պետությունում
գ. Յարոսլավ Իմաստունի մահը
դ. Երկրային ժողովի կողմից Միխայիլ Ռոմանովի ցար ընտրվելը
ե. Իվան IV Ահեղի թագադրությունը

1) բ,ա,գ,դ,ե
2) գ,ա,բ,ե,դ
3) ա,դ,ե,գ,բ,
4) դ,բ,ա,ե,գ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
ա. Իտալական թագավորության հռչակումը
բ. բաբիների շարժման ճնշումն Իրանում
գ. Հունաստանի անկախության ճանաչումը տերությունների կողմից
դ. միապետության տապալումը Ֆրանսիայում
ե. դեկաբրիստների ապստամբությունը Ռուսաստանում
զ. Ջորջ Վաշինգտոնի առաջին անգամ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը
է. հունգարական հեղափոխությունը
ը. ֆրանս-պրուսական պատերազմը
թ. «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
ժ. հակաթուրքական ապստամբությունը Բուլղարիայում

1) թ,զ,դ,ե,գ,է,բ,ա,ը,ժ
2) թ,զ,դ,գ,ե,բ,է,ժ,ը,ա
3) ա,ժ,բ,ե,դ,զ,գ,թ,է,ը
4) գ,դ,ա,ժ,ը,զ,է,բ,ե,թ

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Պետական գործիչը տարբերվում է քաղաքական գործչից նրանով, որ քաղաքական գործիչը կողմնորոշվում է դեպի հաջորդ ընտրությունները, իսկ պետական գործիչը՝ դեպի հաջորդ սերունդը»:**

1) Ջ. Քենեդին
2) Վ. Պուտինը
3) Ու. Չերչիլը
4) Վ. Վիլսոնը

64 **Ո՞ր փաստաթղթից է վերցված հետևյալ արտահայտությունը. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն ու իրագործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:**

1) Անկախ պետությունների համագործակցության կազմավորման վերաբերյալ պայմանագրից
2) Բեռլինի վեհաժողովում ընդունված բանաձևից
3) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 7-րդ նստաշրջանում ընդունված 637-րդ բանաձևից
4) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 15-րդ նստաշրջանում ընդունված 1514-րդ բանաձևից

50 **Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել արվեստի ուղղությունների հետ.**

1. Վ. Վազարելի
2. Ի. Տանգի
3. Է. Նոլդիե
4. Ժ. Բրակ
5. Ու. Բոչչոնի

ա. աբստրակցիոնիզմ
բ. ֆուտուրիզմ
գ. կուբիզմ
դ. էքսպրեսիոնիզմ
ե. սյուրռեալիզմ
զ. օպ-արթ

1) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-բ
2) 1-ե, 2-զ, 3-գ, 4-բ, 5-ա
3) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա
4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-դ

Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Ըստ Ք.հ. II դարի աստղագետ Պտղոմեոսի՝ տիեզերքն ունի արեգակակենտրոն կառուցվածք:
2) Լուքսորի(Թեբե) տաճարային համալիրի կառուցումն ավարտվել է Ռամզես II-ի օրոք:
3) Աթենքի ամենավաղ կառուցված Դիոնիսոսի թատրոնը տեղավորում էր 17 հազար հանդիսական:
4) Ք.ա. II դարի հույն գիտնական Հիպարքոսի կազմած աստղացուցակում առկա են շուրջ 1000 աստղերի երկնային դիրքաթվերը(կոորդինատներ):

52 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Կիևյան Ռուսիայում քրիստոնեությունը պաշտոնական կրոն է հռչակվել 898թ.:
2) Նովգորոդի 19-ամյա իշխան Ալեքսանդրը շվեդ խաչակիրներին ջախջախել է Չուդ լճի ճակատամարտում:
3) Սլավոնական այբուբենը Հին Ռուսիայում սկսվել է գործածվել X դարից:
4) Ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը՝ «Ռուսկայա պրավդան», ստեղծվել է իշխան Վլադիմիրի կողմից:

53 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) 1981թ. նախագահ ընտրվեց հանրապետական Ռ. Ռեյգանը:
2) ԱՄՆ-ի մահմեդական սևամորթների շարժման առաջնորդն էր Մ.Իքսը:
3) 1988թ. կրկին հաղթանակ տարավ Մ. Թեթչերը:
4) 2002 թվականից սկսած հայ զինվորները հունական բանակի զորախմբի կազմում խաղաղապահ առաքելություն են իրագործում Կոսովոյում:

54 **Ո՞վ էր պրետորը.**

1) ավագների խորհրդի նախագահը հանրապետական Հռոմում
2) գերագույն մագիստրատի տեղակալը վաղ հանրապետական Հռոմում
3) գերագույն մագիստրատը վաղ հանրապետական Հռոմում
4) արտակարգ լիազորություններով օժտված պաշտոնյա Հին Հռոմում

55 **Ի՞նչ է «պոլյուդիեն».**

1) ցեղային միության ընդհանուր անվանումն արևելյան սլավոնների մոտ
2) ռուս իշխանի դրուժինայի համար ռազմիկների հավաքագրման գործընթացը
3) սլավոնների կառավարման գերագույն մարմնի՝ վեչեի գումարումը
4) ռուս իշխանի կողմից ենթակա տարածքներով շրջագայելու միջոցով հարկահանության ձև Կիևյան Ռուսիայում

56 **Ի՞նչ է «ղուրուլթայը».**

1) թյուրք-սելջուկների ցեղային ժողով
2) մոնղոլական բոլոր ցեղերի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվող համագումար
3) օսմանյան վարչամիավորների ընդհանրացնող անվանում
4) Մոնղոլական կայսրության փոխարքայություն

57 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Կլիսթենեսի բարեփոխումների հետևանք.**

ա. Ատտիկայի տարածքում նոր վարչաբաժանման հետևանքով խիստ սահմանափակվեց էվպատրիդների ազդեցությունը:
բ. Ատտիկայի բնակչությունը բաժանվեց չորս գույքային խմբի:
գ. Պետության կառավարման գործում մեծացավ ավագների խորհրդի(արեոպագոս) դերը:
դ. Ձևավորվեց 500-ի խորհուրդ, որի շնորհիվ բարելավվեց օրենսդիր մարմինների գործունեությունը:
ե. Ստեղծվեց Ժողովրդական ժողովի կողմից ընտրվող 400-ի խորհուրդ(բուլե):
զ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրը հերթով ղեկավարում էր աթենական աշխարհազորը:
է. Մտցվեց օստրակիզմը, որի միջոցով 10 տարի ժամկետով Աթենքից վտարվում էին պետության համար վտանգավոր անձինք:
ը. Վերացվեց պարտային ստրկությունը, իսկ Ատտիկայից դուրս ստրկության վաճառված աթենացիները վերադարձվեցին պետության հաշվին:

1) ա,դ,զ,է
2) բ,ե,է,ա
3) ա,գ,դ,ը
4) գ,ե,զ,է

58 **Ո՞րն է խաչակրաց չորրորդ արշավանքի գլխավոր հետևանքը.**

1) Կործանվեց և պատմական ասպարեզից հեռացավ Բյուզանդական կայսրությունը:
2) Բյուզանդիայի տարածքների մի մասում ձևավորվեց խաչակրաց Լատինական կայսրությունը:
3) Փոքր Ասիայի նախկին բյուզանդական տիրույթներն ազատագրվեցին թյուրք-սելջուկների տիրապետությունից:
4) Շուրջ կես դարով կասեցվեց օսմանյան թուրքերի առաջխաղացումը Եվրոպա:

59 **Ո՞րն էր 1832թ. Անգլիայում ընդունված ընտրական բարեփոխման գլխավոր հետևանքը.**

1) Մեծ Բրիտանիայում հաստատվեց համընդհանուր ընտրական իրավունք:
2) Ընտրական իրավունք ստացան նաև 30 տարեկանից բարձր կանայք:
3) Երկրում մտցվեց բոլոր չափահաս տղամարդկանց ընտրական իրավունք:
4) Երեք անգամ աճեց ընտրողների թիվը երկրում:

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. եգիպտա-խեթական պայմանագրի կնքումը
բ. արքա Սուպիլիուլիումաս I-ի գահակալումը
գ. հին պարսկական ցեղերի ներխուժումը Հարավային Իրան
դ. Թիգլաթպալասար I-ի գահակալման ավարտը
ե. խեթական արքա Թուդխալիաս II-ի թագավորության սկիզբը

1) ե,բ,ա,դ,գ
2) ե,բ,ա,գ,դ
3) ա,գ,ե,դ,բ
4) դ,ա,ե,բ,գ